

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԵՏԱՐԻԱ

Տարեկան 12 փր.
Վեցամսեայ 6 »

ԱՐՏԱՆՈՒՆԵՐ

2 քիւ մեկ ծուռով
Տարեկան 14 փր.
Վեցամսեայ 7 փր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տոյ.
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԽԻԿ

— 0 —

Ծանուցման տպը
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵՄԵՐԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՑԷ

Rédaction du journal

„Iravounk“

VARN A (Bulgarie)

— 0 —

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

— 0 —

Գրութիւնի և
չիւ տպի

ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՆՑՈՒԴՍՐՁՔ

Այս վերջին շաբաթներու մէջ մեծ ու փոքր գրեթէ բոլոր պեւտութեանց մտքերը զբաղեցնող էն կարեւոր խնդիրը դրամական խնդիրն է, Գաղղիոյ, Գերմանիոյ, Աստրիոյ և դեռ ուրիշ մէկ բանի ազգերու նախարարութիւնները ու երեսփոխանական ժողովները այս միջոցիս յառաջիկայ տարւոյ իրենց ելեւմուտքը որոշելու էն կենսական խնդրով կը զբաղին:

Ձենքի ուժով խաղաղութիւնը պահպանելու պիտոյնքեան դրութիւնը այսօր հարկադրած է պեւտութիւնները իրենց նիւթական կարողութենէն վեր գինուորական և ծովային պատրաստութիւններ տեսնելու: Ծախքերու յարաճուն բազմապատկումը պետական գանձարանները անանկ կացութեան մը մատնած ըլլալէ վատ, երկիրն, որ ընդհանուր ժողովրդաց վիճակն ալ ողբալի դրութեան մը ենթադր. կամ է, ինչպէս գրած էինք մեր նախընթաց թիւի թուրքերէն բաժնին մէջ, Պէտլինէ հաղորդուած տեղեկագիր մը, տեղւոյն նիւթական տաքնապը բացատրելով, ասոր պերճախօս ապացոյց ցոյց կուտար թէ 93000 գործաւորներ բոլորովին անկործ մնացած են. իսկ զորք գտնադներն օրական հազիւ 3-4 ժամ կը գործենք: Արդէն մեր ընթերցողաց ծանօթ են Գերմանիոյ շատ մը դրամատուններուն և գործարանատէրներուն յաջորդական անակութիւնները: Աստ. ըիւր և մասնաւորապէս Հունգարիոյ ընդհանուր վիճակն ալ շատ ողբալի կը ներկայացուի. Պուտա, բէշտէն «Ֆէստիշէ Յայթունկ»-ի կը տեղեկագրեն «անանկութիւնք կը բազմապատկուին, կառավարութեան ծախքը կուենայ, վերջապէս նիւթական անձկութիւնը կը տառապեցնէ ամբողջ Հունգարիոյ ժողովրդը. կառավարութիւնը հասարակութեան խնայողութիւնը մեղմացնելու համար մեծամեծ չի. նոյն ժամանակ սկսած է, որպէս զի գործաւորք զորք գտնեն, բայց

«ՀՈՒԳՈՒԳ»ԻՆ ԱՌԹԻԻ (°)

... խնայողի:

Ժամանակէ մը ի վեր է որ դարձեալ «Իշուուք»-ի խմբագիր Տ. Գուրպէթեանի մասին «Հուգուգ» թերթին խմբագրման առթիւ կարգ մը անհաճոյ տարաձայնութիւններ կ'իմանանք: Այս տարաձայնութեանց զուտ զրպարտութիւն մը ըլլալը լուսաբանելու համար կ'արժեքաւորենք և տեղւոյս նախկին հիւպատոս Բէֆիք պէյի մէկ խօս. տղայնութիւնը հրապարակելը:

Քաղաքիս վաճառականներէն մի. ոյն վաճառատան մէջ(°) Տ. Գուրպէթեանի հետ գտնուած միջոցնուս՝ վառնայի նախկին հիւպատոս, (այն ատեն Գէօսթէն. ճէյի հիւպատոս) Բէֆիք պէյը զուգորդակցութիւնը մը ներս մըտաւ: Կարգ մը խօսքերէ վերջ, Տ. Գուրպէթեանի աքսորման մասին խօսք բերելով յանդիմանական չէշտով մը ըսաւ. «Եթէ «Հուգուգ»-ի հրատարակութիւնը դադարեցնէիր խոստացած պաշտօններս և դրամական նուէրները ընդունելէ վատ Օտեսա ալ չէիր աքսորուեր»:

Ներկայ եղողներս խիստ զոհմնացինք Տ. Գուրպէթեանի այն արհաւիրական պատասխանին զոր ուղղեց թուրք պաշտօնեային: Բէֆիք կուտաւ «կը տեսնեմ որ վառնայի բնութիւնք տակաւին ձգած չես. սակայն գիտցի՛ր որ Ռուսիոյ մէջ աւելի գէշը կըլլայ քան թէ քեզ» ըսաւ:

Այս խօսակցութեան ներկայ գտնուիլս զիս կստիպէ յանուն աշխարհութեան յայտարարել թէ «Հուգուգ» թերթատառ թերթին խմբագրման առթիւ Տ. Գուրպէթեանի համար գրուածները զուտ զրպարտութիւններ են, աւելի ոչ չինք:

Կը խնդրեմ, որ հաճիք ներկայս հրատարակել «Իշուուք»-ի

(°) Այս նամակը մեր ընթերցողներու խորին ուշադրութեանը կը յանձնենք. ալ իրենք թող գտնեն:

(°) Այդ վաճառականը հաստատելով նոյն վկայութիւնը, յայտնի պատճառով կը խնդրէ իր անունը չի հրատարակել:

յառաջիկայ թուոյն մէջ:

Ընդունեցէք խորին յարգանքներս:

ՍԻՍԱԿ ՄԵԼԻՔՅԱՆ

Քոսթանցա, 24 նոյ.

Յ. Գ. — Մէյմէկ օրինակ ալ զրկուած է «Շարժում» և «Հայեր» թերթերուն ի հրատարակութիւն:

Նոյն

Ո՛Վ Է ՅԱՆՑԱՒՈՐԸ

Որոշեցի չի պատասխանել այն կարգ մը յանձնարարութիւններուն ու իսկ բարեկամութեան, այն բազմաթիւ գլխացաւութիւններուն, որոնք չափազանցօրէն կը զբաղեցնեն զիս:

Որոշումիս գործադրումէն առաջ, կուզեմ, սակայն, քանի մը պատկերներ ներկայացնել մեր բարքեւուն տգեղ կողմերէն, որոնք ամեն հայ կեդրոններու մէջ կան, և որուն դարման մը խորհիւր անհրաժեշտ է:

Հրապարակեալ մը թերթ մը կը հիմնէ. հեռաւոր ու մերձակայ անկիւններէն խնդրաւորներ ու յանձնարարութիւններ կսկսին. թերթերը կանոնաւորապէս կուղղուին իրենց հասցէին. ամիս մը, վեց ամիս, տարի մը կամ երկուք, և մեր մեծապատիւ բաժանորդներէն ո՛չ մէկը փոխել կամ խղճմտանքը չունենար հարցնելու թէ՛ «այս մարդը ուրկէ՛» կը գտնէ դրամը ու շարունակ թերթ կը զրկէ: Հրապարակեալ երկա՛ր ու զո՛ւր համբերանքներէ յետոյ, կը պարտաւորի նախ՝ յայտարարութիւն մը գնել թերթին ճակատը, մասնաւոր նամակներով խնդրել բաժնեգիրն, կամ շա՛տ շա՛տ չի վճարողներուն անունները թերթին մէջ հրատարակել:

Բայց ի՞նչ աշխատանքը, նիւթապէս ըրած զոհողութիւնները, առանց դրամի կրած զրկանքները: Այս բան մը չէ, որոնք հոգը Գաղղիոյ մը կը հիմնենք, խոշոր բառերով յայտարարութիւն մը: Մասնագէտ և մանկավարժ ուսու-

Գուրպէք

ցիւններ կը փնտռուին — թէեւ մեր մէջ ամեն ուսուցիչ՝ մանկ-վայժ և մասնագէտ է—Ուսուցիչը կըսէ կտրժի եռանդով մը, կանցնին ամիսներ, մէկ, երկու, երեք միջնակ վեց ամիսներ, կամ աւելի. հարցնող մը չըկայ թէ՛ «այս մարդիկը ինչով կ'ապրին, ի՞նչ կուտեն» որո՞ւն հոգ, թող թաղա-կանը մտածէ։ Մենք զիրենք ապրին իշխան ընտրեցինք—մե՛ծ պատիւ— մինչդեռ անգին՝ երբ օտար վարժարան մըն է, ուր իր զաւակը կը յաճախէ, ամենայն յարգանքով՝ ուզուած իրաւունք թաշակը կը վճարէ, դրուած պայմանները ամենայն ակնածանքով կը յարգէ—հոգ չէ թէ՛ զաւակը բան մը կը սովորէ կամ ոչ—հերիք է ո՛ր օտար է, միշտ իր աչքին բարձր կը թուի։

Ուրախութեան օրեր են, կրօն զաւակին կամ աղջիկին է որ կ'ամուսնանայ. առատաձեռն է ամեն կողմ, կուզէ որ իր կեանքի այդ իրապէս երջանիկ ժամերը ամեն տեսակէտով փառաւոր ըլլան, քահանաներ, ձայնաւորներ, հրաժշտութիւնը իր տեղը ունենայ, գինին, պարը, ամենայն ինչ կատարեալ։ Ու արգելադրելն, ու անուշեղենին և ըմպելիքներուն, ամենուն ալ կանխիկ՝ ձեռնառատ օրէն վճարած է։ Եկեղեցին, քահանաները, ու վերջապէս՝ որ եւ է ազգային պաշտօնեայ կամ հաստատութիւն, որոնք բնականօրէն իրենց պահանջը ունին, կըսպասեն ու կըսպասեն։—Անոնք մերն են, կամաց կամաց իրենց պահանջը՝ թող իրենց զրպանը համարեն։ Ու ալ կանցնին շաբաթներ, ամիսներ, ու վերջապէս անցուկն ալ՝ մոռցուկ կըլլայ։

Մեր պարտնը անգամ է յեղափոխական կամ ազգօգուտ ընկերութեան մը։ Կը վիճի շարունակ, կը պախարակէ միշտ այս կամ այն կուսակցութեան և գործիչին գործունէութիւնը. իր մտածելու կերպը, սկզբունքը, իր Եսը ունի, որ ոչ մէկ բանի չի կրնար զոհիլ. իր կամքը պէտք է յարգուի միշտ։ Կանցնին շաբաթներ, ամիսներ, նոյն իսկ՝ տարիներ, դեռ բաժնեգին մը իսկ չէ վճարած, ու երբ կարգը անոր կուգայ, մեր պարտնը վշտացած կամ վիրաւորուած է։—Ո՛չ, ո՛չ, ա՛լ չուզեր, մինչեւ իսկ, անոր անունն իմամալ կամ բերանն առնել։

Աւ դեռ ինչի՞ր ու ինչի՞ր, որոնց եթէ շարքն երկարել ուզենք, այն չա՛մ պիտի բազմապատկուին ուղեգային տեղեղութեան այս պատկերները։ Ի՞նչ ընելու է ազգային հաստատութիւններու, ազգային պաշտօնեաներու շահերն ու գոյութիւնը ապահովելու համար, ի՞նչ ընելու է ազգային ամեն գործառնութեանց մէջ՝ «ապագիկի» դրութիւնը քննելու համար, որ մեծագոյն արգելքն է ամեն ազգօգուտ ձեռնարկութեանց ու հաս-

տատութեանց յառաջացման։ Եւ ո՞վ է յանգուորը. պաշտօնեայն, հաստատութիւնը՝ թէ ոչ ժողովուրդը։

22 նոյ. 1904
Գեորգի Բաղդասար

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ
ՅԻՆԻՊԵՆԻ ՓԱՂ. ԽՈՐՀՐԴՈՅ

... Խմբագիր
Պատիւ ունինք ձեզ զրկելու, ներկայեալ, տեղույս թաղ. խորհուրդին նոյնմբեր 22 թուակիր առ Գեր. Այցելու հովիւր մատուցած հրաժարականին պատճէնը։ Կը խնդրենք որ հաճիք սոյն հրաժարականը հրատարակել ամբողջովին «Իրաւունք» ի յառաջիկայ թուոյն մէջ, ի գիտութիւն հասարակութեան։

Այս առթիւ, յայտնելով ձեզ մեր շնորհակալիքը, կը մատուցանենք ձեզ մեր յարգանաց հաւատարմութիւն։

Ի զիմաց հրաժարեալ թաղ. խորհրդոյն

Ատենադպիր. Ատենապետ
Պ. Տիգրայի Զ. Սարգիսեան

Ֆիւրկայ, 23 նոյ. 1901

ՊԱՏԱՆ

Գերապատիւ Սրբ. Հայր, թաղ. խորհուրդս իր վերջին նիստին մէջ որոշած ըլլալով վերջնականապէս քաշուիլ ազգ. գոյծերէն, կուգայ մատուցանել Ձեր Գերապատութեան իր հրաժարականը։

Այս առթիւ խորհուրդս հարկ կը համարէ պարզել իր գործունէութեան ծրագիրը, որ է

Ա. Վարժարանաց Բացում. — խորհուրդս՝ որոշած ըլլալով ամեն զոհութիւն ընել ազգ. երկսեռ վարժարանաց համար, յաջողեցաւ սկստեմբերի սկիզբը վերաբանալ վարժարանները, պաշտօնի կոչելով ուսուցչական խումբ մը որ իր հմտութեամբը ու մասուցած գրական գործունէութեամբը հանրամասնութիւն է։

Բ. — Ազգ. Տնտ. — խորհուրդս՝ նկատելով որ դպրոցական թոշակի դրութիւնը աւելի ժողովրդականացած է, ընդունեց շաբաթական թոշակի դրութիւնը ու գործադրութեան գրաւ. ներկայ տարեշրջանին համար. ի դիւրաւութիւն ձեռնարկ։ Շաբաթական թոշակը, բաղադրամամբ տարեթոշակին, աւելի դիւրամատչելի եղաւ աղքատիկ դասուն ու այս տարուան թոշակներու հասոյթին վրայ բերաւ, բաղադրամամբ նախորդ տարուանին, 25 յոյս առաւելութիւն մը։ Իսկ ամուսիններու կամ զաւակաց զատարարակութեան ծախքերէ գուրկի եղող աղքատներու վրայ դրուեցաւ միայն ազգ. կրթութեան տուրքը, երկու տարի ոտաջ պատրաստուած ազգ. կրթական տուրքի ցուցակներուն վրայ հիմնուելով։ Այս տուրքը գծադրաբար չի տուաւ. այն կալուած հասոյթը, թաղիկներով հարուստ թէ աղքատ ազգայիններու տնտարբերութեանը։

Գ. Հին Առեղիճներ. — Գտնուող իր վեր գրեթէ ազգ. մայր տու-

մարին մէջ մնացած են կարգ մը հին պահանջներ, որոնց գումարը կը հասնի այսօր, միջին հաշուով, երեք հարիւր ոսկւոյ։ Միայն բանկալը հազար յիսի աւելի աւելեցրէն, պրտակի, կնուքի, ննջեցեալի եւն. իրաւունքներէ մնացած է թաղ. խորհուրդս մտադիր էր այս հաշիւներու կարգադրութեանը համար կորովի ձեռնարկ մը ընել։ Արդէն հոկտ. 28ին գումարուած Ա. ընդհ. ժողովոյ մատուցուած տեղեկագրին մէջ այս հին աւելեցրէն խնդիրն ալ ժողովոյ ոչ ազգութեան յանձնուած էր։

Դ. — Կաշտակներու Խնդիր. — Ազգ. կայանները գրեթէ ամենքն ալ նորոգութեան պէտք ունին։ Թաղ. խորհուրդս ձեռք առաւ «Զիջթիկ» կոչուած ազգապատկան գեանին վաճառումը, գետին մը որ մօտաւորապէս 10—11000 լէֆ կարծէ ու տարեկան 150—180 լէֆ հասոյթ միայն կը բերէ։ Անհրաժեշտ պէտք մըն է այդ գետինը ծախել ու անոր գրամով միջանի նորոգութիւններ ընել կալուածներուն վրայ, կալուածներէ մին գրաւէ ազատել ու այլ ազգ. պէտքեր հոգալ եւն եւն։ Կայանական այս խնդիրներով զբաղելու համար յանձնաժողովոյ մը գոյութիւնը անհրաժեշտ ըլլալով, Թաղ. խորհուրդս հոկտ. 28ին ի ժողով հրապարակեց սույն թաղեցիներ, որոց մէկ փոքրամասնութիւնը պատասխանեց միայն հրաւերին։ Այդ ժողովին մէջ՝ խորհուրդս, բացատրելէ յետոյ Զիջթիկի վաճառման պէտքը, յետեալ պահանջներու գանձումը, պարզեց ազգ. Սննդատեղիին անձուկ վիճակը ու խնդրեց հասարակութեան օժանդակութիւնը ի մասին ազգ. պիտոնէի կարգադրութեանը։ Ժողովը առանց ու եւ գործնական որոշման մը յանգելու, ցըրուեցաւ։ Այն ասին պէտք տեսնուեցաւ Բ. թղ. ժողովոյ մը հանրութեան արամադրութիւնները չօգտիլ։ Այսօր 11ին յիսուս եւ հինգ ազգայիններ հրաւիրուեցան խորհրդակցութեան. ասոնցմէ տասը հոգի միայն ներկայացան։

խորհուրդս՝ նկատելով որ հասարակութիւնը առ հասարակ իր ձգգ. պարտականութեանց մէջ կը թերանայ կոր, այսինքն

Թէ՛ չի վճարեր իր ազգ. կրթ. Տնտ. թէ՛ չ'աջակցիր խորհրդոյս պատահական հասոյթներու գոյացման աշխատելով։

Թէ՛ իր ըրած զոհողութիւնները չի գնահատուելէ վատ, կարգ մը գեհնիկ խճճանքներու կենթարկուին։

Իր պարտքը կատարած ըլլալու գիտակցութեամբ կը հրաժարի, Զիջթիկի նկատմամբ ու իր պատշաճ կէտ խաղցուն։

խորհուրդս պիտի շարունակէր պաշտօնը, եթէ իր գոյութիւնը ժողովրդեան այս անբացատրելի անտարբերութեան իբր պատճառ ցոյց չի տրուէր։

Կը քաշուինք մենք։ Կը մաղթենք որ յաջորդ թաղ. խորհուրդը յաջողի ի գլուխ հանել մեր վերեւ յիշած ծրագիրը որ անհրաժեշտ է տեղույս ազգ. գործերու բարեկարգութեանը տեսակէտով։

Կը խնդրենք, Գեր. Հայր, իր ներկայ հրաժարականը ստանալու պէս, հաճիք հոս գալ ու կազմել առժամայն խորհուրդ մը որուն պիտի յանձնենք բոլոր հաշիւները դպրոցին թէ եկեղեցւոյն, 1900 յունիսէն մինչեւ մեր հրաժարած օրը։

Մատչելով ի համարոյր Ձերդ Գերապատութեան աջոյն, միամբ խորին յարգանք

«Անդամք հրաժարեալ թաղ. խորհրդոյն»

22 նոյեմբ. 1901
Ֆիւրկայ

Ա. Նորին Գերապատութիւն
Տ. Բարթեղիմէոս Մ. Վ. Պաղճեան

Այցելու հովիւ Պուլկարիոյ Հայրց ի Թ. Փաղարճը

ՈՐԲԱՆԱՄԱՐ ԶԵՆՈՅՈՒՄ

Երկսեռ Որբանամ Ընկերութեան Դ. թղ. ընդհ. ժողովը պիտի գումարուի յառաջիկայ կիրակէ, դեկտ. 2, կէս օրէ վերջ, ժամը ճիշդ 2ին. Ազգ. վարժարանի սրահին մէջ։

Օրակարգ

- Ա. — Գործ. Ժողովոյ վեցամսեայ համարատուութիւն։
- Բ. — Գործ. Ժողովոյ նոր ընտրութիւն։
- Գ. — Ընդհանուր գիւտնի հրաժարեալ երկու անդամոց ընտրութիւն։

Ուստի կը խնդրենք ընկերութեան արգոյ անդամներէն, որ ներկայ իբր հրաւիրագիր ընդունելով բարեհաճին որոշեալ ժամուն ներկայ գտնուիլ։

Մնամք յարգանք
Ընդհ. Ժողովոյ Դիւան
Ատենադպիր Ատենապետ
Ա. ՓԱՋԱՋԵԱՆ Յ. ԳՈՒՐԴԵԹԵԱՆ
Վառնա, 28 նոյ. 1901

ՊԱՏՈՒԵԼԻ ԴԵՈՐԳԵԱՆ

Քաղաքս զտնուող բողոքականաց խմբակը, իրեն յարմար պատուելի մ'ալ ունի. արուեստին նուիրուած մարդ մըն է սա՛. Է. Երանի՛ թէ մեր ծնրած ու լիկած «փէրէճէճերներն» ալ այդ մարդէն արինակ առնէին։ Ուրտեղ լաց, կոծ, թշուառութիւն, աղքատութիւն եւ հիւանդութիւն, մեր պատուելին հոն է, բերանը Տիրոջ խօսքը, արին մէջն ալ միւթթարութեան ոսկին՝ հնչուն մետաղը։ Բոլոր պանդուխտ ազգայնոց կ'այցելէ ու կը քարոզէ. անոնց ձրի փօղեցածութիւն կընէ, անհեռազնուորեմ, առանց մէկ սանթի մ'ալ խորելու եւ առանց խալը դնելու արթնը փարախը որոճացողին եւ արթնը գործը հեգնողին միջեւ։ Անա՛ այս աղքատ եւ իր գործին նուիրող կ'օժանդակ մի քանի օրէ ի վեր կարնոյ արկածելոց համար հանգանակութեան ձեռնարկած է. այս օրերս հայու մ'ալ կը գիտէ, նկատելով զայն պարտաճանաչ վերջինս պատուելին պարապ կը ճանթէ «այդ հանգանակութեան թուղթը թաղականը լուսեռացուցած չէ» ըսելով։ Մենք այժմ կը ըսենք թէ, Պատուելին իր գիտակցութեան, պարտաճանաչութեան եւ ուղղամտութեան մէջ հասնի է այնտեղ որին դեռ չեն հասած մերիները. վասնորոյ կը խնդրենք հրապարակաւ որ չը սրտմտի պատուելին մերժում ընդունած ըլլալուն համար, այլ շարունակէ իր բարեկամատակ ձեռնարկը։

Գաղթական հայ մը
Րուսչուք, 23 նոյ.

Յ. Գ. — Հրապարակաւ կը նուիրեմ միանդամայն մեր սրտագին շնորհակալութիւնները Սարգիս աղա Գուրգիսեանին, որ անխորհր կը մասնակցի ամեն այս կարգի ազգային նուիրատուութեանց։

ՆՈՅՆ

ՍՏՈՐ ՄԱՏՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

Բ.
ԵՏԵՆԻՍ

ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ

Այն պիղծ մեքենայութեան մէջ, զոր ետեւէն սարքեր են եւ որով կու գին յեղափոխական ու հանրային հասարակայն փոխակերպ կեանքի մը ընթացքին լման ու մաքուր պահած անունս սեղցնել, ամենէն ընդլզեցողիչ, ամենէն քստմնելի դերը որ կայ եւ զոր գեռ չեմ կրցած իր բովանդակ անարգութեամբն ըմբռնել՝ Լեւոն Սարգիսեանինն է ան նորէն:

Բայց Լեւոնը... աստ տղան, որ ասին մը իմ կեանքիս մէջ տեղաւորուած, իմ սիրտս ունեցած, իմ է՛ն անկեղծ ու մտերիմ զգացումներս վայելած, իմ անձնու իրութեանս ազատ տանած, կրթնած է, եւ որուն համար բարեկամութիւններ զոհած՝ ու թրշնամութիւններ ստեղծած եմ ինքզինքիս՝ այդ ապրիտը բաւական երես, բաւական խիղճ պիտի ունենայ եղբր մեղուկեցնելու ինծի զէմ լարուած լըպիւր դատի մը մէջ: Եթէ մեղսակցած ալ չէ — բան մը որուն տարակուսելու ու ժող պատճառներ ունի — իր պարտականութիւնն էր ելլել, նետուիլ ու ըսել — ու ինքը միայն կարող էր ըսել — պոռա՛ւ նոյն իսկ վճռական ու ազնիւ բառը, որ անմիջապէս պիտի հասնէր իմ անձն ու պատիւս խնդրէ դուրս նետելու:

Սարգիսեան ո՛չ միայն անկարող կ'ըլլայ ատանկ վեհանձն խղճահարութեան մը, այլ վիթխարի վատութիւնը կ'ունենայ երկդիմի ու զոգահար նամակով մը իմ վրաս բեռնել վրէժալու ամեն յանցանք — Եթէ յանցանք կայ իրաւոյնէ:

Չէ՛, պիտի ուզէի կարծել, թէ ինքնարդարացումի ցաւազին տաղնապով մը կուրցած, անասնացած, ու անձկութեան խելալի վայրկեանի մը մէջ, անգիտակցօրէն, յոսահաօրէն լիտու չած է այդ զօնէ որոշումն, եթէ վստահ չըլլայի որ իր նամակը հաշուրուած, չափուած, կշռուած, աշխատաւոր մեղսակցութեան մը տաժանելի տքնութիւնն է: Ու անա թէ ինչու:

Առանց վայրկեանի մը վարանելու, կրնամ յաւանքել թէ վարդօ՛ Անկլարն Լի էր որ, մէկ օրէն միւսը ո՞րտեւրու եղբայրութեան մը հաղիւ հայերէն մէկ քանի ամիսներէ խօսքերուն վրայ՝ փութար իր ասորիներու մտերիմը, ամենօրեան աշխատակիցը, յեղափոխական հասարակութեան կուսակիցը, «Թրքահայերի ազնիւ տիպիցի միւս»ը մատնիչ հռչակել, կամ նո՛յն իսկ ներքի որ ուրիշներ այդ բանը համարձակին իր թերթին մէջ:

Բայց նպատակներ կան որոնց կաւրելի չէ հասնել առանց քիչիկ մը զոհելու՝ հոգ չէ թէ վերջը ամեն բան կը դարձանուի...:

Վարդօ՛ սա սրտառու խօսքը, թէ «Լեւոն Սարգիսեան՝ թէեւ անհայն, (ո՛վ նշանաւորը վարդօ) բայց զաշնակցական է, իսկ Շահրիման վերակազմակերպի կարեւոր անդամներէ մին է՛» ամեն բան, զո՛նէ շատ բան չի՛ բացատրել:

Բայց գիտ պարտականութիւն մը զիս կըստիպէ այս բոլոր կէտերուն վրայ չի ծանրանալ: Ու անձնական զիւրի գոհացումի մը համար պարտականութեան մը զէմ մեղանչելու

ընդունակ եւ կարող չեմ զգար ես ինքզինքս:

Սարգիսեանին գաղով, կ'ամփոփեմ եղբայրացութիւններս:

Ես դիմքը ամբաստանելու փափաքը, կամէն թիւնն իսկ նոյնեցայ ու չունիմ գիտ այս ինքնին անհայն ու ապուշ — եթէ իմ գիտցածս է միայն — ինքզինքն մէջ:

Եթէ նո՛յն իսկ Սարգիսեան իր պիղծ ու հիւանդագին մտածումը — որուն համար առաջին վայրկեանէն իսկ մոլեղնաբար դատաւարաց ինքզինքը իմ առջիս, եւ զոր կատարելով ուղղաւ մտութեամբ բարոյական վաղանցուկ տաղանայի մը միայն կրցայ ես վերադրել այն ատեն — եթէ Սարգիսեան իր այդ մտածումը քաւելէ, անոր համար արդուք թափելէ վերջ՝ գործադրեց զայն, եթէ՛ հակառակ իմ սրտացաւ ու սրտապնդող խօսքերուս, հակառակ ստիպողաբար այդ համբաււոր թուղթը ոչնչացնել պատուիրելու, եւ հակառակ մանաւանդ զայն չքողարցած ըլլալը նոյն օրը, քանի մը վայրկեան վերջն իսկ իր բերնով ինծի ըսած ըլլալուն, բոստը ձգած է զանի, Սարգիսեան ասով անխոստովանելի դաւ մը, գերազանցօրէն անբարոյական արարք մը գործած կ'ըլլայ:

Բայց մատնութիւնը...

Տարիներով իմ ամենօրեան բախկան, սրտակիցս ըլլայ, ու ֆիւրկէ մեկնելէն վերջն իսկ, վառնալէն իմ բարեկամութեանս զիմուններ ընդ, տուել անկէ, ու օր մըն ալ — կիսնքին մէջ իմ երեսն միայն եւ միայն բարիք ու անձնու իրութիւն տեսած ըլլալուն համար — ելլել մեղսակցելի զիս միտելու մէջ չա՛ն ունեցողներու հետ, համաձայնիլ անոնց հետ, իր փրկութիւնը անշուշտ կանխաւ սակարկելէ վերջ, ու իր օձիքը ազատելու առաջին հաւաքական ջանքէն իսկ իմ անուշտ սալու, իմ ուսու բաներ մը նետելու քստմնելի ու անորակելի ցածութիւնն ունենալ, ահաւասիկ մատնութիւնը, բո՛ւն, հրէշային մատնութիւնը:

ՎԱՀԱՆ ՇԱՀՐԻՄԱՆ

«Իրաւունք»ի խմբագրութեան

Ինչ որ ալ ըլլան անցեալին մէջ ձեր եւ իմ միջեւ եղած թրիթագութիւններն ու հակառակութիւնները, չեմ կրնար ինքզինքս արդիւն ի վեր հանելէ այն ազնիւ վերապահումը, զոր ունեցաք՝ հիւրընկալելէ առաջ ձեր սիրականերուն մէջ ֆիւրկէի վահան Մաղմանեանի ամբաստանագիրը, ըրացուցելէ անգիտութիւններ պահանջելով իրմէ:

Ձեր այս ընթացքը ո՛յնքան աւելի գնահատելի թուեցաւ ինծի, մանաւանդ երբ ինկատի առի այն պարագան, թէ «Շահրիման»էն նուազ բարեացակամ ըլլալ կը պարտէիք իմ մասին, գրուած ըլլալով — զարմանալի՛ զուգադիպութիւն — նոյն այդ տխուր Սարգիսեանին երեսէն մեր մէջ յառաջ եկած խզումը:

Անշուշտ միջեւ հիմա հասկցաք, թէ ի՛նչ տրեւէր ունին ձեզ ապահովելու համար մէջ բերուած այն երեսակայական վկայութիւնները, որոնք Բարիզէն կարող մը մարդոց կը վերադրուէին: Աստուց բացարձակ սուտեր ըլլալը չի սկստագուցներ իմ աչքիս ձեր ցոյցին խղճահարութիւնը, որովհետեւ կ'ըմբռնեմ թէ չէ՛ք կրնար երեւակայել որ ու եւ մարդ կարող

կրնայ ըլլալ այդ աստիճան սուտ խօսելու, այդ աստիճան լիրբ ու անպատկառ յանգեցնողութեան մը ասոր անոր անունը շահագործելու: (*)

Հիմա կը փութամ պատասխանել ձեր հարցումներուն:

1. Կուզէք որ գոնէ «մօտաւորապէս» համարաւոր նամակին պարտականութիւնը բեւեմ ձեզի: Ես կը կարծէի պէտք եղածէն աւելի բացատրած ըլլալ զայն, նրբ կը գրէի. «Պ. Սարգիսեան զարմա՛ք կը յայտնէր, թէ ի՛նչպէս միջնորդ կրնայ ի որ այնքան խստութիւն կայ, նորէն Պրիստին մարդիկ պիտի դան, այն ալ վարժուէի»: Կը կրկնեմ որ բառ առ բառ չեմ յիշեր, բայց կ'աւելցնեմ որ երբեք լուրջ գրուածք մը չէր, նո՛յն իսկ նախապիւրիս կային տաճիկ պաշտօնեաներուն ուղղութիւնը: (**)

2. Գրութեան ներքեւ «երկու թուրք հայրենասէրներ» ստորագրութիւն չեմ տեսած, այլ՝ տաճիկներն անուն մը պարզապէս, զոր բնաւ չեմ յիշեր ճշգրտութեամբ:

3. Ձեր երրորդ հարցումը չափազանց թելադրական է, ու կարծէ որ քիչ մը ծանրանամ այդ կէտին վրայ:

Ինծի կը հարցնէք, թէ «կը կարծեմ որ Լ. Սարգիսեան ինծի ներդրութիւն մը, իսկ մը ըրած ըլլալու համար իմ ձեռագիրս իր ըով պահած» ու անոր ընդօրինակութիւնը նամակատու ձգած ըլլայ:

Ասանկ կասկած մը ինքզինքիս չը պիտի ներէի 1899ին, ու կանկանեմ նո՛յն իսկ քանի մը ամիսներ առաջ, Բայց հիմա՛ ա՛լ դադրած եմ ըլլալ — տխուր փորձառութիւններով զորս չեմ մտղմեմ ուրիշներուն — առաջուան պէս կուրօրէն վստահող մը բարեկամութեան վրայ: Հիստորիկութիւններ կան որոնք մարդուս սիրտը կը կարծրացնեն քիչ մը ու՛ գրեթէ բոնի, յոռետես, կասկածաւոր կը դարձնեն է՛ն ուղղափոխներն ու է՛ն սրտաքնններն իսկ: Այսօր Սարգիսեանէն աւելի քան կը յուսամ, աւելի քան կ'ըստանամ, եւ ուղղափոխ ալ «մութը ձգուած կէտ» չի մնայ այս լրբուկ ու ցաւագին պատմութեան մէջ, ներքեցէ որ քանի մը իրողութիւններ ներկայացնեմ:

Ուսկից է որ այս խնդիրը հրապարակ կուգայ, ո՛վ է առաջին փոխողը: Ես ինքն Սարգիսեան:

Որո՞ւ եւ ի՛նչ նպատակի համար ըրած է այդ գեղեցիկաւ: Մի փրկումէ՛ք, ձեզի ծանօթ ու ա՛յնքան համակրելի Պ. Անտօն Գոշն է Սարգիսեանի առաջին խոստովանալը:

Ո՛վ է Անտօն Գոշը — Սարգիսեանին մտերիմը, կուսակիցը, որ 1899ին իսկ կը դիտայ ամեն բան ? Եւ սակայն կը շարունակէ մնալ Լ. Սարգիսեանին նո՛յն մտերիմը, նոյն կուսակիցը: Ու, ինչ որ շահեկան է, Պ. Անտօն Գոշ՝ 1899էն մինչեւ 1900ի վերջը եւ անկէ ալ մինչեւ 1901ի առաջին կէսին լրանալը, կը շարունակէ ինծի հետ իր «սիրելի» յարաբերութիւնները, շարունակած է ժողտիլ երեսիս, յարաբերուելու հանդէսներու մէջ յեղափոխական բանախօսութիւններէս յետոյ՝ ամեն մարդէ առաջ փութալ ձեռքներս սեղմելու:

(*) Շահրիմանի խոստովանութեան Բարիզէն վկայ ցոյց արուած անձերը կը հերքեն իրենց վկայութիւնը: Բայց իր գրաւոր խոստովանութիւնը այդ պակասը լիցուց արդէն:

(**) Բնականաբար այդ նախատիքները այն պաշտօնեաներուն զէմ տրեւէր կաշառք տանելով կը թուարարէ յաշս կատաղարութեան կատկածելի հայերուն փախուստը:

Մ. Խ.

եւ մինչեւ իսկ չ'որհըր ըրած է ինծի իր յանկուցիչ զէմքին լուսանկարը քաշել իմինիս հետ, որքա՛ն նուազ յանկուցիչ, աւա՛ղ... վերջապէս — գուցէ հաւատարիմ միտուել համար «նշանաւոր վարդօ»ին — օղի ալ պարպած է հետս: Այդ զմայլելի, այդ սիրալի Անտօն Գոշն է, որ 1901ի երկրորդ կէսին՝ Վեղափառ խղճահարութիւնը կուսնայ ֆիւրկէի լուսնոտին ականջն ի վար փոփաւու, թէ կեանքս ու պատիւս իր ներքինի փափուկ ձեռքերուն մէջն է:

Ուրիմն Սարգիսեան, որ 1899էն մինչեւ 1900 օգոստոս, ու ֆիւրկէն մեկնելէն վերջն իսկ, մինչեւ 1901ի կէսը, ինքզինքը ինծի անձնուէր, բարեկամ ու եղբայր կը ձեւացնէր, այդ տխուր տղան, միեւնոյն ատեն ետեւէս գաւած է ու կը դաւէ եղբր, յնականօրէն ծածկելով ինձմէ իր Դիւիւն Լիւն Լիւն Լիւն Լիւն:

Հիմայ, այս բոլորը գիտնալէ վերջ, կը հարցնեմ ձեզի, դուք ի՛նչ պիտի կարծէիք, եթէ իմ տեղս ըլլայիք:

4. Ցաւագիրքն քննելի ֆիւրկէ կանչուելու օրերուն էր Սարգիսեանի այդ պիղծ մտածումը: (*)

Այսչափով չի լմնար սակայն պատմութիւնը ետեւէս սարքուած դաւադրութեան, որուն մեղսակցած են ուրիշ շատեր եւ զոր հաշուարդարութեան, գիտակաթափութեան ու մաքրագործումի օր մը — Գր. հետեւ չէ թերեւս — ամբողջութեամբ հրապարակ պիտի տամ:

ՎԱՀԱՆ ՇԱՀՐԻՄԱՆ

1. Դեկտ. 1901

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պոլսոյ Պատրիարքարանի Խորհրդով որոշուած օրուան նիստին ալ ապարդիւն տնցաւ. միայն հանգուցեալ Ատենայի տաճարի փաշայի մահուան առթիւ յատկացուած թիւն յայտնուելով, «հոգեւոյ» կարգադրուեցաւ ու ատենագրուեցաւ:

Քաղաքական ժողովը տրգէն իր ատենագրութիւնները կորսնցուցած եւ անգամոց մեծ ամառնութիւնը հըրաժարած կամ շարունակարար բացակայ, ոչ մէկ լուրջ խնդիր օրինաւորապէս որոշուել վիճակին մէջ չէ:

— Սոյ կոթողիկոսական ընտրելեաց շարափոխելի ցանկը դեռ Դոնէն Պատրիարքարան չէ յանձնուած: Անցեալ շրիք շարթի օր Օրմանեան Մեծ Եպարքոսի ապարանքը երթալով, ի նշան թաշ, այդ խնդրոյ համար ունեցու տեսակցութիւն մը, բոլոր արդիւնքը

(*) Հետեւաբար ֆիւրկէի Պատրիարք. Խորհուրդը պարագայ ձանձրութիւն ստանձնած է մեր նախորդ թընով հրատարակուած իր պաշտօնական նամակը գրելով. քանի որ Շահրիման ալ կը վկայէ թէ Օր. Բ. Գ. ին պաշտօնի հրաւիրուած օրերուն (ֆիւրկէ գալ մերթնէն առաջ) Լ. Սարգիսեան մատնութեան քայլը առած է: Արդէն եթէ մարտնչէն ետք բուռէր, Մարգիսեան վարժուէիին Պրիստին եղնիկը արդիւրդ այդ «պիղծ մտածումը» շարունակուելու եւ վիշերը անքուն անցնելու պէտք չպիտի ունենար:

ԽՄԲ.

պիտի հաղորդէր ուրախ օրուան խառն ժողովին . բայց ինչպէս վերջը բռնեք, ոչ մի բան չի հաղորդուեցաւ և ժողովը ամուլ անցաւ : Ըստ երեւոյթին այս անգամ լուրջիտ փայան է որ կաթողիկոսի ընտրութեան համար ձգձգումի քաղաքականութեան կը հետևի . մինչդեռ կրիկիոյ թեմերուն քառասունէ աւելի պատուիրակները ամիսէ մը ի վեր Ստանայի՝ մէջ կըսպասեն ցանկին հասնելուն, որ վերջնական ընտրութիւնը կատարեն և իրենց տեղերը մեկնին :

—Տ. խաղ վարդապետ Վիեննայէ անցած ատեն մաքսատան մէջ թողոր է եկեղեցական զգեստներ և անօթներ : Կրօն. ժողովը վեհ. կաթողիկոսին տեղեկագրած է վարդապետին այս յանցանքը : —Մոսկուայի հայ գաղութը տեղւոյն Լազարեան Ճեմարանի հիմնադիր Յովհաննէս Լազարեանի հարկերամեայ Յորեկանին առ. թիւ, որ հոկտ. 24ին կատարուեցաւ, որոշած է եկեղեցւոյ գումարին մէջ աղջկանց ծխական վարժարան մը կառուցանել, որուն համար հանգանակութիւն բացուած և կարեւոր գումարներ ստորագրուած են :

Իսկ Լազարեան Ճեմարանի իր գոյութեան 87ամեակին մէջ կը գտնուի . ռուս թերթ մը կըսէ թէ այդ դպրոցը թողապետներու դրամներու հետ միասին ունի 1 միլիոն 600,000 ռուպլի :

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԵԳԻՅԷ

ԹԻԻՐԻՔԻՍ

Պապը Ալի Սթանպուլէնէ պիտի չեզոքանայ : Երբեք (չըջաբերական) եօլայուպ, Անդրանիկին ֆէտայի չեթեսինէ էնվոյի իզվի-յաթ համը իթմիշ տիր :

—Գանատան Աճէմ քէօրֆէյի-նի (Քատիմէ) գատար չըմէնտրֆէր-եարմագ իթիյաղը թէքրար Ալ-ման չիրքէթի իսթէմէքտէ տիր :

—Րամազան վէ Պայրամ մաշ-լարը էօտէմէք վէ սայիր իզթի-զալար իչիւն Օսմ. պանգասը մար-տա գատար 730000 լիրա Պապը Ալիյէ էօտիւնճ վերէնէք : Իւպու մէպլաղ 1200000 լիրա իսթիգրազ հէսապընտա օլուպ, պունա մու-գապիլ եէնի թարիֆէ մուճիպ կէօմ րիւկ զամմիյաթընտան իլերի կէ-լէնէք ֆազլա հասըլաթ, վէ 4 սէ-նէտէն պէրու Տուեուլը Ումումի-էյէ թէքը օլըմըլ օլան պուլը վա-րիտաթ (քի րուս թաղմինաթը ի-չիւն պըրագըլըլ տը) թէմինաթ կէօսթերիլմիշ տիր :

—Օնպէշ կիւնտէն պէրու ըՍ-թանպուտա եուճուրճագ էսէրի կէօրիւլէտիկինտէն, կէչէն ճու-մաա էրթէսի կիւնինտէն իթի-պարէն՝ Սթանպուլտան հարէքէթ իտէն վարօրլարա թէմիլ բաթէն-թի վերիլմէքտէ տիր :

—Հիճազտա ըսեան իտէն Ա-րապլար վէ թիւրք ասքէրլէրի պէյիինտէ վուգու պուլան սօն գաւկառա 40 ասքէր թէլէֆ օլ-մուշ օլտըր Ռէյքըրէ Պոմպէտէն պիտիլմիշ տիր :

—Իզմիրտէ պիր թիւլմիւն պօ-ճըսը Աստրիա գօնտուս գալուս գալը իւզէրինէ աթէշ իթմիշ վէ աղըրճա եարէլէմիշ տիր, Գօլճու տէրհալ թուլմուլուշ վէ գօնտու-սը թիւլմիւն գաշագճըսը զանն իթմիկինի սէօյլէմիշ, Պու վու-գուլթման տօլայր Աստրիա սէ-ֆարէթի հիւքիւմէթմէն թարգիյէ թալէպ իթմէքտէ տիր :

—Չար՝ Սթանպուտաթի էլչիսի Ս՝ Ջինովիէֆէ՝ քէնտի էլ եաղը-սը իլէ պիր մէքթուպ օլլայուպ, պունուս րուսիայա ֆարտէլի սու-րէթտէ իյթիս վաղիֆէ իթմէսին-տէն տօլալը պէյանը մէմնուիյէթ իթմէքտէն մաւտա, անա Սուրբ Վլադիմիր նշանըն իհտա իթմիշ տիր :

ՏԱԽԻԼԻՑԷ

Բարիզ պանգէրլէրինտէն ալը-նաճագ 125 միլիոն իսթիգրազըն պուլկար հիւքիւմէթի վէ պանգա-լար իլէ մուգարլէր օլան ճէտվէի մէճիսի վիւքէլայտան Սօպրանիէ-յէ թազտու օլընտը . 100տէ 5 ֆայիզ, 15 սէնէտէն թէէտիյէ օ-լընմագ իւզրէ : Քէզա թիւլմիւն մօնօրլը՝ 10 միլիոն ֆրանք սէր-մայէսի օլան անօնիմ պիր պու-կար չիրքէթինէ 50 սէնէ իչիւն թէվտի օլընաճաղընա տայիր մու-գարլէր ճէտվէի Սօպրանիէյէ թազտիմ օլըմըլ տիր :

Իսթիգրազ թէէմինաթ օլմագ իւզրէ թիւլմիւն վարիտաթը կէօս-թէրլմիշ տիր :

Մէզքիւր իսթիգրազ վէ թիւ-թիւն ճէտվէլէրինի Սօպրանիէ-տէ թէտգըլէ մէսէլէնի հալ ու-ֆապը 10-12 կիւնտէն անճագ իսթիմ պուլուր :

—Սօֆիատան դիկտ. 7տէ, Պուք-րէշէ վերիլէն պիր թէլէկրաֆա պինտէն, Սիս Սթօն սալ սէլիմ օլուպ, հազրէն թիւրք թօփրա-ղընտա սէրպէթ զարգըլաճագ, վէ չագիլէր 16,000 լիրա գապուլ իտէնէքիլ իմիշ : Միս Սթօնըն րիլօ մանապուրտա պուլընտըլըն պիտիլմիշ տիր :

—Պուկարիտան Սօպրանիէ ա-զալարը դիկտ. 23տէ Պուկրատա պուլընաճագլար, Սեպիլանըն ըՍ-քուպչինա ազալար տալիս իւն-վար 2սինտէ Սօֆիայա իտէնի վիզիթա իտէնէքիլէր, Պուկրատա իքի միլլէթ մէպուլարը թէնէմիւ-օլընուպ, նուլթարլէր Պուկար վէ Սըրպ միլլէթլէրին գարտաչըլա-րըն իլան իտէնէք տիրլէր :

—Պուկարիայը գուրթարան միլլէթլէֆա րուս իմրէքաթօրը Ալեքսանտր իքիւնճիլին զիքրի ի-չիւն Սօֆիատա՝ հարլըլ օլան սանէմին էքպըր յէքիլտէ կիւ-միւլտէն իմալ օլըմըլ պիր պէր-կիւզարը Չար Նիքօլայա թագաթիմ իթմէք իչիւն Ֆէլս. Բէննա հազ-րէթլէրինի պիչչախս կէօթիւր-մէսի գօմիսիօնը մախօուստան թէքիլթ օլըմըլ, վէ Բէննա տա-լիս գապուլ իթմիշ տիր, ֆազաթ էլան կիւն թային օլընմալը :

ԻՆԿԻԼԹԷՐԱ

Դիկտ. 5տէ Լօնտա պէլէտիէ տարիէսինտէ Բրէնս տը կալա մախսուս քէշիտէ օլընտէ զիւ-ֆէլթտէ, խարիճաէքի ինկիլիզ միւսթէմիլլաթըն ինկիլթէրալա սաուրգ պուլընտըրլըն Բրէնս վէլիահա պէյան իթմի : Լօրտ Սօլլպէրի նուլթա պաշլայուպ, տէտի. «Շու սըրա չօգ խասիմ-լէրիմիլ օլուպ, պուլար քէնտի էֆքեարլարըն կիզլէյէմէյօրլար, ֆազաթ տիկէր թագաֆտան պիզ-տէն իրազլարա պուլընտէ գար-աաշլարըմըլըն մուլթէնէթի մէվ-ճուտ պուլընմալը պիզէ էն է-հէմմիյէթի տիր, Պիլիմ հարա-քեաթըմըլ իչիւն տիկէր միլլէթ-լէրին պիզէ հաքիմ օլմագ իսթէ-մէլէրինի տալա գապուլ իտէմէմ-վէ օնլարըն էֆքեարը իլէ պիզ տալա թարիպի հարէքիաթըմըլը թէպտիլ իտէմէլիլ :

ՄԸՍԸՐ

Մըսըր պէլէտիէսի իչիւն 500 պին լիրա իսթիգրազ օլընաճա-ղընտան, Լօնտա տա վէ Գահրէ-տէ 100տէ 4 ֆայիլէ պու իս-թիգրազ 25 սէնէ իչիւն իմզա-լանմագտա օլուպ, Մըսըր հիւ-քիւմէթի մէքիւր մէպլաղը թէա-հիւտ իթմէքտէ տիր :

ՖՐԱՆՍԱ

Ֆրանսըլ տէվէթի տալիս պան-գալարտան 265 միլիոն ֆրանք իսթիգրազ իթմէքտէ տիր :

—Ֆրանսանըն մէճիսի մէպու-սանընտա Ս՝ Մոսապիւան Նամ մէպուս Ալմանիս իլէ Ֆրանսանըն իթմիֆտա թէշթիլ իթմէսինի թէքիլթ իթմի :

8-10 սէնէ էվվէ պէօլէ պիր թէքիլթա պուլընտէ շախը Ֆը-րանսըլար «միլլէթ խայինի» թէա միյէ իտէնէքիլէր իտի. ֆապաթ պու կիւն մէճիսի ումուլմուտէ պիր մէպուստան պէօլէ պիր թէքիլթ վարիտ օլտըլը հալտէ, հազըրու-տա հիչ պիր հէյէճան միւշահէտէ օլընմալըլ տըր, Հէր նէ գատար Ալպա Լօրէն պու կիւն թէքար Ալմանիանըն գապթընտա իսթէ, Ֆրանսըլար 1870ին աաաթէթին-տէն թէսքին վէ զարէզքեարըլը թէք իթմիշ կէօրիւնիյօրլար :

ՀՈԼԱՆԾԱ

Հոլանտանըն նէվճիվտն գրալի-ցաաը գօնապընտան սէրիսըլըգ ա-լամէթի իլէ գապուլ իթմիկի պիր իքի շամար թէէսիլինտէն չօ-ճուգ տիւշիւրմիւշ վէ խասթա-լանմըլ տըր, Ջէվճիլտէն ալը-լաճագլարըն տալիս «Հապա» պիտիլմիշ տի իսթէ, պու հա-վաթիս րէսմէն թէքիլթ օլընըլար :

ԱՍՍՏՐԻԱ

Ղիէննատա մէճիսի տայան ա-զալարընտան էքսէրիսի, ետնի սա-պըգ նուլըլար, վալիլէր, մէպու-լար վէ ալթիլթիլէր, տուէլլօնըն մէննի իչիւն պիր պէյաննամէ իմ-զալայուպ նէլը իթմի էր :

Ալմանիս իմրէքաթօրը տալիս մախսուս պիր էմիրնամէ իլէ գա-պիլթիլէր տուէլլօլը մէնն ու եա-սապ իթմիշ տիր :

—Աստրիատա կէօչէպէ օլան Ջինկեանէ գապիլթիլէրին տալիս պիր եէրտէ իսթեան իթմիլէրի ի-չիւն հիւքիւմէթին չիմտիլ գա-տար էլէ ալտըլը թէտպիլլէր սէ-մէրէսիլ գալըլ օլտըլըն վիւքէ-լա րէյիսի պէյանլէ պէրապէր, պուլտան սօնրա պու մաքսէտ ի-չիւն թէտապիլի չէտիտէ իթմի-խազ օլընաճաղըն սէօյլէմիշ տիր :

—Հոնգարիանըն ահվալը մա-լիյէսի բէք զայիֆ վէ էհալիսի կէչիւմէքտէն աճիլ գալարագ, բէք չօզլարը Ամերիկայա հիճրէթ իթմէքտէ օլտըլը սթաթիգաէն վէ ճէրիտէլէրտէն տնլալըլըլ օլու-գարիա պօրճարը իչիւն սէնէտէ 210 միլիոն գուրօն ֆայիլ էօտէ-մէքտէ, քէզա պու գատար տալիս պէլէտիլէրին պօրճը հիսապ օլը-նըլար, վէ պու պօրճ չիւն պէ կիւն աթթմագտա տըր :

ԹՐԱՆՍՎԱԼ

Լօրտ Ֆիշնէր Պօէր Շէնէրալը Պօթայա սուլհ միւլթէրէսինէ կի-րիշմէք թէքիլթ իթմիշ իսթտէ, Պօթա՝ թաշթը գօմանտալընտա շու սըրա գուլթէթի պիր օրտու-սը պուլընտըլընտան, միւլթէրէ-յէ կիրիշմէքտէն էվվէ պիր տէֆա տահա շարբըլմագ արզուսընտա պուլընըր րմըլ, «Թալմըլ»ըն ալ-տըլը հապաթիսէ կէօրէ, Պօէր րէյիլէրի սուլհ թէքիլթիլէր գա-պուլ իթմէք էֆքեարընտա իմիշ-լէր :

—Լ. Ֆիշնէրին սօն բաքօրթը-նա պինտէն տալիս, չօգ նօզթա-լարտա Պօէրլէրին տմէլաթը գուլ վէթլէլմիշ գիր :

—Պօէրլէր Նաթալըն չըմէնտրֆէր խաթթընտան իլերի կէչմէլէ չա-լըլմըլար, ֆազաթ մուգաֆադ օ-լամալըլար :

ԿՕՇԿԱԿԱՐ

Ճաշակաւոր եւ տոկուն կօշիկ հագնելու համար գիմիլ Ստեփան Խօրաան-ճեանի խանութը, փողոց Մուսալա, Գիւնըր խիստ շափաւոր են :

ԹԱՏՐՈՆ ՍՍՆԹՐԱԼ

Վաղը, հինգշաբթի գիշեր, մամը Թին Վէսէլօ հայ գեղասանական խում-բը պիտի ներկայացնէ «Գեղջիկական Հարսանիք» երգախառն գուսաներգու-թիւնը 4 արարուած եւ ծիծաղաշարժ գաւելտ մը : Մօտ օրէն պիտի ներկայացուի համալաւար Շէքսպիրի Օթէլլօ ող-րերգութիւնը : Դերասանական խում-բը թէ՛ տեսարաններու եւ թէ՛ հա-զուստի պատրաստութեան մասին ո եւ է ջանք չպիտի ինայէ :

Одговорникъ Н. Драгулевъ

Печатница "Взаимность", Варна